**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 21.01.2021թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2020/283

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Մասնակից՝ «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի ներկայացուցիչ՝ Մ. Մելքոնյանի

«Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ի տնօրեն՝ Է. Զաքարյանի, ներկայացուցիչներ՝ Ա. Բարսեղյանի, Ս. Բեկչյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/94» ծածկագրով գնանշման հարցում, Երևան քաղաքի Էրեբունի և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների հենապատերի վերանորոգման աշխատանքներ ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/94»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության կողմից 22.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19285-2020 գրությամբ «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

### 1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի (այսուհետ՝ Պատվիրատու) 09.12.2020թ.-ի թիվ 24/1-5/24227ել գրության հիման վրա, 22.12.2020թ.-ին «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 22.12.2020թ.-ին:

23.12.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/283 համարի ծածկագիրը:

15.01.2021թ.-ին և 21.01.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.01.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 21.01.2021թ.-ին:

### 2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանը 09.12.2020թ.-ի թիվ 24/1-5/24227ել գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

*«Երևանի քաղաքապետարանի և «ԶԱՔԱՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 17.08.2020 թվականին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/94» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով,*

*ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթեր-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները /այսուհետ՝ աշխատանք/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:*

*Ընկերության կողմից պայմանագրով ստանձնած Երևան քաղաքի, Վարդաշենի 9-րդ փողոցում գտնվող 22,30մ երկարությամբ և միջինը 2,10մ բարձրությամբ հենապատի կառուցման շինարարական աշխատանքների կատարման պարտակորությունները՝ 7.702.704 (յոթ միլիոն յոթ հարյուր երկու հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամ արժեքով ընդհանրապես չեն կատարվել:*

*Նշված պայմանագրով աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել՝ 25.12.2020 թվականը:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հողվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:*

*Վերը նշված պայմանագրերի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե. ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար...:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:*

*Երևանի քաղաքապետի 2020 թվականի նոյեմբերի 16-ի հ. 3576-Ա որոշման համաձայն՝ պայմանագրերի և/կամ/ կանխավճարի և/կամ/ որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրերի լուծման, պայմանագրերի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացների իրականացման գործառույթները վերապահել են վարչական շրջանների ղեկավարներին:*

*Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԶԱՔԱՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՓԲԸ ընկերությունն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 26.11.2020թ. 24/1-8/23269ել գրության պահանջը, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է «ԶԱՔԱՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՓԲԸ հետ կնքված պայմանագրից համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:*

*Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «ԶԱՔԱՐՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՍՈԼՈՒՇՆՍ» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հողվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:*

*Կից տրամադրվում է վերը նշված պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ հիմք հանդիսացած համապատասխան փաստաթղթերի պատճենները:»:*

Պատվիրատուն ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

**3. <u>«Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.**

Բողոքներ քննող անձը 24.12.2020թ.-ի գրությամբ դիմել է «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19285-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ն ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է, որ առարկում են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված 26/26-1/19285-2020 գրության պահանջին և խնդրում են «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ին չներառել վերոնշյալ ցուցակում:

**4. <u>ՍՑ-LO-2020/283 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի և «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ի միջև 17.08.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/94» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի թիվ 2 հավելվածի՝ աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետի ավարտ է սահմանվել 25.12.2020թ.-ը:

iii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 11.12.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 24/1-5/24219ել ծանուցման համաձայն՝ «Երևանի քաղաքապետարանի և «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ի միջև 17.08.2020թ.-ին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/94» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի հենապատերի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար»:

Մասնակցի կողմից պայմանագրով ստանձնած Երևան քաղաքի, Վարդաշենի 9-րդ փողոցում գտնվող 22,30մ երկարությամբ և միջինը 2,10մ բարձրությամբ հենապատի

կառուցման շինարարական աշխատանքների կատարման պարտավորությունները՝ 7.702.704 (յոթ միլիոն յոթ հարյուր երկու հազար յոթ հարյուր չորս) ՀՀ դրամ արժեքով ընդհանրապես չեն կատարվել, իսկ աշխատանքների հանձման վերջնաժամկետ էր սահմանվել 25.12.2020 թվականը:

Պայմանագրերի 3.1.4 կետի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե. ա) կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար...:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 26.11.2020թ. 24/1-8/23269ել գրության պահանջը, հետևաբար Էրեբունի վարչական շրջանի ղեկավարը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է Մասնակցի հետ կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19285-2020 գրությամբ «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի թիվ 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևան քաղաքի Էրեբունի և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների հենապատերի վերանորոգման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Համաձայն թիվ 2 հավելվածի: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ի միջև 17.08.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/94» ծածկագրով պետական գնման պայմանագիր թիվ 2 հավելվածի՝ աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամկետի ավարտ է սահմանվել 25.12.2020թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 11.12.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ 24/1-5/24219ել ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ի միջև 17.08.2020թ.-ին կնքված «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/94» ծածկագրով գնման պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից 09.12.2020թ.-ին միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով

Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետի դրույթները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները և չի կատարել Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի 26.11.2020թ. 24/1-8/23269ել գրության պահանջը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, ծառայությունների մատուցման ժամկետը սկսել էր հոսել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից և պետք է ավարտվեր 2020թ.-ի դեկտեմբերի 25-ին: Բողոքներ քննող անձը հաստատված է համարում նաև, որ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծել է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետով սահմանված ժամկետների խախտման հանգամանքը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետով սահմանված խախտումն արձանագրելու համար, անհրաժեշտ է այդ ժամկետի սպառված (վերջացած) լինելու հանգամանքի առկայությունը: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ արձանագրել ժամկետների և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Պայմանագրի 3.1.4 կետի «ա» ենթակետով սահմանված ակնհայտ անհնարինության հիմքով պայմանագիրը միակողմանիորեն լուծելու իրավակարգավորման կիրառման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում ակնհայտությունը, որը տվյալ դեպքում, Պատվիրատուի կողմից սույն գործի քննության ընթացքում չհիմնավորվեց: Վերջինս չներկայացրեց որևէ վերաբերելի կամ թույլատրելի ապացույց առ այն, որ Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների կատարումն ակնհայտ անհնար էր:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի

լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ սույն դեպքում, վերը բերված հանգամանքների հիմքով, Պատվիրատուն մինչև Պայմանագրով սահմանված՝ Մասնակցի պարտավորությունների կատարման ժամկետի լրանալը՝ աշխատանքների կատարման ակնհայտ անհնարինության հիմքով, չէր կարող լուծել Երևանի քաղաքապետարանի և «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ի միջև 17.08.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-20/94» ծածկագրով պետական գնման Պայմանագիրը, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.12.2020թ.-ի թիվ 26/26-1/19285-2020 գրությամբ «Զաքարյան Քոնսթրաքշն Սոլուշնս» ՓԲԸ-ին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/283 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝** **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**